

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ճԵՄԱՐԱՆԻ 2000-2001 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշունը հոդին է վերադարձնում այն դերեները, որոնք ամառ փոխ էր վերցրել հոդից: Ասել է, թե ամեն ինչ փոփոխվում է ժամանակի մեջ, բայց ոչինչ չի կորչում, այլ մի ինչ-որ շրջապատճեղով վերադարձնում է այնպես, որպեսից սկսել էր: Շրջաններ, շրջաններ... սակայն անընդհափ ձգվող ու վեր բարձրացող, ինչպես մի պարույր: Այսպես է լինում զարգացումը ժամանակի մեջ:

Ինչպես բոլոր սեպեմբեռները ճեմարանական կյանքում սկիզբ են դնում նոր փարեշրջանի, զարգացման մի նոր օղակի, այս սեպեմբեռներն եւ եկավ ու իր աշխանային շնչով կրկին բացեց Գևորգյան Հոգևոր ճեմարանի դրաները՝ ներս հրավիրելով բոլոր նրանց, ովքեր ծարավն ունեն ուսման ու կրթության. և ոչ միայն մրագիր:

Սեպեմբեռի 23-ն էր, երբ Գևորգյան Հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճնում, բարձրից հայող երախտաշար Կոմիտասի հանդարդ հայացքի ներքո, Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, հերթական անգամ ինչեւ Տերունական աղոթքը՝ սկիզբ դնելով նոր ուսումնական դարեշրջանի բացման հանդիսությանը: Ներկա էին բարձրասպիշման հոգևոր հայրեր, Մայր Աթոռի միարաններ, ուսուցիչներ, ճեմարանական սաների ծնողներ և հյուրեր:

Տիրավանդ աղոթքից հետո ճեմարանի սաներից կազմված երգչախումբը, պրն Ռ. Շաբրաթյանի ղեկավարությամբ, կապարեց Հայաստանի Հանրապետության ու Գևորգյան Հոգևոր ճեմարանի հիմները, որից հետո ճեմարանի փոխքանությունը Տ. Վաչէ քին. Հայրապետյանն ընթերցեց Մարկոսի Ավելարանի՝ այդ օրվա իմաստը խորհրդանշող Դ 1-6 հավաքածու, ուր պատմվում է «Տերմնացանի առակը»: Այսուհետև կրօքախումբը ներկաների ունկնդրությանը հանձնեց «Աշակերտք Քրիստոսի» շարականը:

Գևորգյան Հոգևոր ճեմարանի փեսչի պաշտոնին կոչված Տ. Եղիշե ավագ քին. Մարգարյանը բացման իր խորում, դիմելով ներկաներին, ասաց.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ Հայրեր, սիրելի դասախոսներ, ուսանողներ և ներկաներ.

Ինչպես սեպեմբեռին բացվում կամ վերաբացվում են բոլոր ուսումնական հասկապությունները, այսօր մենք եւ պաշտոնական բաց ենք անում Գևորգյան Հոգևոր ճեմարանի դրաները, որն իր գիրկն է առնում 130 ուսանող: Անցյալ փարի մեր ուսա-

նողների թիվը 83 էր: Ինը սաներ մեզ մոտ ուսումը շարունակելու եկան Վազգենյան դպրանցից: Այս փարի Շովենը ճեմարան են դիմել 72 դիմորդներ, որոնցից 38-ը, հաջող քննություններ հանձնելով, ընդունվել են մեր այս հասպառություն, և այս փարի, ճեմարանի պարմության մեջ առաջին անգամը լինելով, մենք երկու Ալսարան ունեցանք: Ուրախ եմ հայդարարելու, որ այս փարի Գևորգյան Շովենը ճեմարանն իր ընթացքը սկսում է բավականին լավ պայմաններում: Զերդ Սրբությունը, դեռ Արարագյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության դարիներին, ցանկություն հայդնեց, որ մեր հոգևոր երեք ուսումնական հասպառությունները մեկ ծրագրով առաջնորդվեն: Վյոլ մբակացումն իրականացավ այս փարի, երբ Դուք Զեր բազմազբաղ առօրյայից ժամանակ զբար զիշավորելու մանկավարժական-ուսումնական խորհուրդը, և ուսումնական ծրագիրը խմբագրվելուց հետո հասպարվեց: Եկ այսօր մեր երեք հոգևոր դպրանցներն առաջնորդվում են հենց այդ միասնական ծրագրով:

Հպարփ եմ հայդարարելու նաև, որ Գևորգյան Շովենը ճեմարանն այս փարի Վեհափառ Հայրապետից նվեր սրացավ հոյակապ մի ննջարանային համալիր՝ իր շուրջ 40 առանձնասենյակներով, որոնք օժիված են ժամանակակից բոլոր հարմարություններով, և մեր ուսանողները պիտի ապրեն 3 կամ 4 գրեղանոց սենյակներում: Կարծում եմ, որ Զեր հայրական այս ողջ ուշադրության հանդեպ մեր ուսանողությունը պիտի պարասխանի բարձր ուսումնառությամբ, նկարագրով, ապագայի դեմքով, հայրենասիրությամբ ու եկեղեցասիրությամբ:

Վեհափառ Տեր. 2000-2001 ուսումնական դարեցքանն այսօրվանից մեզ համար սկսում է իր իննամյա ճանապարհը, և հայցում ենք Զերդ Սրբության օրինությունը, որպեսզի այն լինի հարթ, անսայթաք, իսկ ամապերջին, երբ տնտեսության հաշվը դալու լինենք, հպարփորեն կանգնենք Զեր առջև ու ասենք. «Զերդ Սրբություն, մեր ուսանողները ոչ միայն մեկ փարով մեծացան, այլև ծեռք բերեցին զիտելիքների մեծ պաշար, եկեղեցասիրություն, իսկ ամենակարևորը՝ ամրացան հավաքի մեջ»:

Թույլ դրվեք խոսքին ավարդին մեր բոլորի անունից աղոթք առաքել առ Բարձր-յալն Ասպիված՝ ծայնակցելով մեր ժողովրդի աղոթքին, որն իր հոգու խորքից է քիւն.

Ամեն հայի սրբից բխած,

Լսիր այս ձայն, ո՞վ Ասպիված,

Երկար կյանք դուր Հայրապետին,

Երկար օրեր Հայոց Շոր:

Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ

Քո իսկ իհմնած Մայր Աթոռ»:

Արժանապարփիվ քահանա Նոր խոսքից հետո Ելսարանի սան Դավիթ Մարգարյանը մի հարված արդասանեց հայ խոսքի վարպետ Պարույր Սևակի անզուգական

«Անրեի զանգակապուն» պրեմիջ, որն ունկնդիրներին գեղափոխեց 19-րդ դարի վերջի փոշով ու արևով հին Վաղարշապատ, որ ճեմարանի առջև բարձրագույն բազմազանություն էր, իսկ այդ ամենի մեջ՝ շիորեված ու առանձնացած մի պատճենի, որը բարիներ անց պիտի դառնար ազգային ոգու եկեղեցները հնչեցնող զգայուն լարը: Այս հոյզերը փոխվեցին հայրենասիրության և հայրենիքի լուսավոր ապագան գենսելու, ձգրելու պայծառ երազների, երբ ճեմարանի սաների կարարմամբ հնչեց Հովհ. Թումանյանի խոսքերով զրված Ալ. Նարությունյանի «Հայրենիքին հետ» երգը: Ճեմարանական սաների այս համառոր համերգային ծրագրի ավարտից հետո Վեհապատճեն գլուխ դժուար կայացաւը հայրապետը գլուխ դժուար կայացաւը:

«Սիրելի տեսուց Հայր, Գերաշնորհ, Ռոգնշնորհ Հայրեր, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ,

Այս պահին բոլորին հոգին լցված է ուրախությամբ և ցնծությամբ: Սկսվում է նոր ուսումնական դրախին, և նոր երազներ, նոր հուսեր, նոր մշտածումներ են ձևավորվում յուրաքանչյուրին հոգում ու մտքում, որոնք տառաջիկա այս դրախությամբ լուսացրին պիտի իրականություն դառնան, պիտի լյանք առնեն և իրենց արդյունքներով քերկրանք, ուրախություն պարզեն յուրաքանչյուրին: Այս հավաքով ու վայրահությամբ է յուրաքանչյուրու մուտք գործում ուսումնական դրախա շնչեց ներս: Ինչպես գիտեք, արդեն արձակուրդային շրջանից սկսած, տեսչի պաշտոնին կոչվեց S. Եղիշե ավագ քին. Սարգսյանը, որն իր կազմը համարեց նոր օգնականներով՝ հանձնին S. Վաչե քին. Հայրապետյանի և Մուշեղ ասրբկավագի: Փոփոխություններ կատարվեցին նաև դասախոսական կազմում. հրավիրվեցին նոր մանկավարժներ, կազմնեց նաև ուսումնական խորհուրդ և մշակվեց կորական ընդհանուր մեկ ծրագիր: Այս ամենը մեզ վայրահություն է ներշնչում, որ այս դրախին պիտի լինի արդյունավետ գործունեության դրախ:

Կանգնած հոգնոր սպասավորների գալիք նոր սերնդի առջև՝ չենք կարող չափ չափ չափ չափ առաջադառնաւ Եկեղեցու կարիքներին, կյանքի նոր պայմաններին և այն մարդարարավերներին, որ այսօր ներկայանում են Եկեղեցուն և մեզ՝ հոգնորականներին: Ժամանակները փոխված են, Եկեղեցականի մասին խորհրդային շրջանի հասկացողությունը, ընկալումն ու պարկերացումը ամբողջապես ի շիր են դարձել, հասարակության համար այլևս փակ ու խորհրդավոր ոչինչ գոյություն չունի: Եկեղեցին մարքսի է, Եկեղեցականի գործունեությունը՝ դրանելի յուրաքանչյուրին, որովհետք Եկեղեցականն այլևս ապրում ու գործում է իր հավաքացյալի հետ, և Եկեղեցականին ու հավաքացյալին բաժանող սահմաններ, արգելքներ ու վարագույրներ չկան: Այս պայմաններում, քնականարար, հայ հավաքացյալն ակնկալում է իր առջև դրանել Եկեղեցականի այն կերպարը, որ կերպվել ու ձևավորվել է դարերի մեջ և դեռ գրել հայ հավաքացյալի պարկերացումներում: Այլևս

հայ հավատացյալը եկեղեցականին չի կարող հարզանք մարդուցի սուկ այն բանի համար, որ նրա ուսերին սքեւն է, որ նա պարզապես կրողն է այն արժենքների, որ դարձեր շարունակ մեր նախամիք, մեր հայրերն իրենց հավատքով, և իմրունով ու արյուն-քրիստով են կենունել, այլ ուզում է գեւնել ու հարզանք մարդուցի արժանակորին, որը զիսի արժենել իր կոչումը։ Այդ սպասումները, հոգևոր ու մշտակոր առումով, մեր կյանքի, գործելակերպի և հավատքի դրսնորումների վերափոխումն են պահանջում։ Վարահ են, որ այս գաղափարներով, հանողումներով ու գեւիլրով պիտի առաջ նորդվենք առաջիկս ուստինական գործում, որպեսզի կարողանանք մեր ժողովրդի սպասումներին արժանի սերունդ հասցնել։

Անշուշտ մենք համար էականն ու կարեռը, մեր կյանքի առանցքը աղոթքն է, որը ձևավորում է մեր հավատքը, իմաստավորում ձեռք բերված գիրելիքները։ Եթե մենք աղոթքով անված, աղոթքով պարուրված հավատք ու հավատքի գործեր չունենք, անհմաստ են դառնալու, առ ոչինչ են նկարվելու ուսուցիչներից սրբած կամ աշխատանքով ձեռք բերած մշտակոր այն արյունքները, որոնք ամրարելու ենք այս հաստափությունից ներս։ Մեր սպասումն ու մաղթանքն է, որ կյանքը Շոգևոր Ծեմարանում իսարրսիված լինի աղոթքի վրա, որպեսզի հավատքը դառնա մեր էռջյան շաղախը, որպեսզի Գնորգան Շոգևոր Ծեմարանի սան լինելու գիրակցությունը կարողանա դրսերվել մեր պահվածքում, մեր կյանքում ու գործերում։

Յանկանում եմ շնորհավորելու ու շնորհակալություն հայրնել գեւությանը՝ այս շրջանի նախապատրաստական աշխատանքների համար, ինչպես նաև մեր մանկավարժներին, որոնք անվերապահ սիրով ու նախանձահմեղությամբ աճատային այս շրջանում աշխատեցին գեւության հետ՝ Գնորգան Շոգևոր Ծեմարանում աշխատանքի ընթացք ծրագրավորելու և ընդունելության քննություններին իրենց մասնակցությունը բերելու համար։ Իմ գնահատանքն ու շնորհակալությունը նաև մեր Շոգևոր Տայրերին, որ հանձն առան իրենց Ժամանակը դրամադրելու և Գնորգան Շոգևոր Ծեմարանում դասաժամեն սպասանձնելու համար։

Յանկանում եմ գնահատանքու ուղղել նաև մեր սաների ծննդաց, որ կրթության ու դաստիարակության մի որոշակի բաժին ունեն և նախանձախնդիր են, որ իրենց գաղակաց գրւաննեն ուսույն, հավատավոր և մի այնպիսի անձնավորություն, որի արդարին երևոյթն արդեն գուսավորություն է բողոքում և խոսում այն մասին, որ այդ անձը ուրիշ կրթություն, դաստիարակություն և էռջյուն ունի։ Դա արյունքն է այն գիրակցության ու ոզու, որով շաղախված է այս հաստափությունը և Տայադանյայց Առաքելական Սույր Եկեղեցին։ Իմ աղոթքն է առ Ասպակած, որ Տերը գորավիզ լինի բողոքի՝ արձանագրելու ցանկալի արյունքներ և արդարացնելու մեր հայրերի

իղձերն ու մեր ժողովրդի՝ արժանավոր հոգնորդական տեսնելու սպասունելոցը: Այս առիթով ցանկանում են հարգանքի խոնարհումով հիշել և արժանին մարդուցել երջանկահիշապակ Գարեգին Ա Վեհափառ Տայրապետին, որը հնարավոր դարձրեց կենցաղային նոր պայմաններ ունենալ Գևորգյան Տոգնոր Ծեմարանի սաների համար:

Թող Ասրծու աջը հովանի լինի մեզ և առաջնորդի ուսումնական կյանքի ճանապարհով՝ ապահովելով «Հնդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարեւոր»:

Հավարբ հանդիսության երգչախմբի կադարձամբ և ներկաների ձայնակցությամբ հնչեց Տերունական աղոթքը:

Հրամեցին Վեհափառ Տայրապետը «Օրինեալ Եղերութ»-ով բարի երգ մաղթեց նոր ուսումնական փարեշրջանին:

**ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գևորգյան Հոգնոր Ծեմարանի
Զ լարանի սան**